

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 րուբլ. 4 կա տարվանը 6 րուբլ.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Խմբագրատանը գրվում են ուղղակի
Тифлис. Редакция „Мели“)

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիգուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն. Հայոց թատրոն.
Նամակ Մոսկովայից. Նամակ Գանձակից. Նամակ
Թէլաւից. Նամակ Բագուից. Ներքին լուրերու—
Արտաքին տեսութիւն. Հայաստանի դրու-
թիւնը. Արտաքին լուրերու—Սառն լուրերու.
—Յայտարարութիւններ. — Բանասիրական
խնդիր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Ուրբաթ, մայիսի 2-ին, Հայ դերասանա-
կան մշտական խումբը Ամարային թատրո-
նում առեց ճերմու Գոյրը դրաման, հեղ. Է-
միլ դը Փի արքեպիսկոպոս, Ֆրանսերէնից պ.
Արքաթ Թովհանիսեանի, զաւեշտ և կենդանի
պատկերներ, յօդուտ նայն խմբի յուշարարի
(սուֆլորի): Հասարակութիւնը լցրել էր
թատրոնի դահլիճը (շատ քիչ դատարի տե-
ղեր կային) արժանապէս վարձատրելու յու-
շարար պ. Մատինեանի անտեսանելի և ան-
շնորհակալ աշխատութիւնները: Մենք աւե-
լորդ ենք համարում մանրամասնաբար պիէ-
տայի բովանդակութիւնը պատմել, որովհետեւ
շատ հետեւ կը տանէր մեզ, միայն այդքան
կատեղ, որ պիէտայի մէջ միտք կար, տեղեկե-
ցիա կար և նրան ներկայացնելու համար
հարկաւոր էր, որ մեր դերասանները լաւ ու-
սումնասիրէին և սովորէին իրանց դերերը և
մի փոքր ևս դիւրաշարժ և դիւրա-

թեք լինէին բեմի վրա: Բայց որովհե-
տեւ դերասաններէն ոչ մէկը ոչ ուսումնասիրել
և ոչ սովորել էր իր դերը, այդ պատճառով
պիէտան շատ սառն անցաւ և առաջին գոր-
ծողութեան ժամանակ համարեալ բոլոր հա-
սարակութիւնը օրջաւում էր: Օրինակ, դերա-
սաններէն մէկը պ. Չմէկեանց, որ Բօբեր դը
Պիլիբրին խաղաւ ամուսնի դերն էր կա-
տարում, բացի նրանից, որ դերը չէր զիտէր,
բայց և, ինչպէս միշտ, երգում էր և միջան-
կեալ ձայներ էր հանում զերը յիշեալ հա-
մար և խեղճ բնութիւնը Մատինեանց իր
անխախտելի խոցից կողորդ պատում էր
լսելի անկու համար իր ձայնը: Առհասա-
րակ, վերջին ժամանակներում պ. Չմէկեանը
յաջողութիւն չունի հայ բեմի վրա և հա-
սարակութիւնը միշտ դժգոհ է նրան նրա
խաղից: Մենք մի համեստ խորհուրդ կը
տայինք պ. Չմէկեանին թողնել թատրոնա-
կան բեմը և զբաղվել իր մասնաւոր գործե-
րով: Բաւական է ինչ որ ծառայել է նա հայ
բեմին, թող ամեն մի դերասան այդքան
ժամանակ և այդքան եռանդով ծառայէ հայ
բեմին և հասարակութիւնը շատ զոհ կը լի-
նի նրանցից:

Վերջները մի ուրիշ օրինակ. պ. Մուքիա-
սեանցը կատարում էր դուքս Արման դը Բո-
լիէօն խաղաւ ամուսնու Բօբեր դը Պիլիբ-
րին կնոջ սիրահարի դերը. մենք զարմա-
նում ենք, թէ այդ դերասանը ամբողջ տարի
խաղալով Հայ բեմի վրա, չէր կարողացաւ զը-
տնել իր ամպլուայի, իր ուժերին յարմար դե-
րեր, և շատ քիչ բացառութեամբ, միշտ ա-

յաջողութիւն էր ունենում և այդ ներկայաց-
ման ժամանակ ևս անաջողութիւն ունեցաւ:
Ահա աղագոյց. բեմը ներկայացնում է մի
փառաւոր զարդարված սենեակ, ուր երկու
սիրահարները՝ դուքս Արման դը Բոլիէօ
(Մուքիասեանց) և Վալենտին դը Պիլիբրին
(օր. Սատղիկ) Բօբեր դը Պիլիբրին կինը
կանգնած խօսում են միմեանց հետ: Վալեն-
տին դը Պիլիբրինը տեղիկանալով, որ իր ա-
մուսինը իմացել է իր դէպի դուքսը ունեցած
յանցաւոր սէրի մասին, նա յուսահատված
վճռում է փախչել իր ամուսնու տնից սիրե-
կանի հետ: Սիրուհին արտասուայից աչքե-
րով և փրփր ծնկաչոք աղաչում է իր սիրահա-
րին փախչել միայն, այդ սրտաշարժ բոլորին
զուրկ պ. Մուքիասեանց, ինչպէս մէկ մար-
մարի արձան կանգնած բեմի մէջ կէտի
վրա, ակոմոսիոն նման պատասխանում էր իր
սիրուհու թախանձանքներին, կարծես թէ
նրա ամեն մի շարժումների համար մեծ առե-
գանք էին առնելու նրանից: Մի խօսքով պ.
Մուքիասեանցը ոչ դուքսի շարժումներն
ունէր և ոչ սիրահարի աղաւթութիւն իր ձե-
ւերի մէջ:

Իսկ ինչ վերաբերում է Գօնգալին (Աւա-
լենց), որ Բօբեր դը Պիլիբրինին տան շա-
տախտ քարեկամի դերն էր կատարում, նոյն-
պէս վատ էր: Պ. Աւալենցը մէկ մեծ պա-
կասութիւն ունի, որ միշտ վայացնում է բո-
լորովին նրա խաղը. նրա շարժումները և
ձևերը շատ կոպիտ են, և այդ մանաւանդ
նկատելի է և աչք է ծակում, երբ նա Ֆրե-
րանսիացիների դերերի մէջն է բեմ դուրս

գալի: Օր. օր. Սատղիկ և Սիրանոյշ վատ չէին
իրանց դերերի մէջ:

Այժմ մի քանի խօսք ևս ասենք զաւեշտի
մասին: Ինչքան որ պիէտան սառն և վատ
անցաւ, այնքան լաւ աղագորութիւն գործեց
և սթափեցրեց հասարակութեանը օր. Սատ-
ղիկը, կարգալով Պիլիբրինի գովասանքը զեղե-
ցիկ բանաստեղծութիւնը: Հասարակութիւնը
բուն ծափահարութեամբ վարձատրեց զե-
րասանուհուն և երկրորդ անգամ ևս կրկնել
տուեց այդ զեղեցիկ բանաստեղծութիւնը. օր.
Սիրանոյշն ևս երգեց մէկ բաման, որ նոյնպէս
լաւ աղագորութիւն ունեցաւ:

Կալով կենդանի պատկերներին, մենք զար-
մանում ենք կոմիտեի վրա, որ նա թոյլ է
տուել այդպիսի խայտառակ պատկերներ
կայացնել բեմի վրա: Զը գիտենք, թէ ինչ
կրթողական նշանակութիւն ունի զէրան վա-
ճառատեանից յետոյ՝ նման կենդանի պատկեր-
ները: Կարծես թէ մենք հայերս այնքան կըր-
թվել ենք, այնքան զարգացել ենք, որ չունենք
հասարակական ցուրի և պակասութիւններ,
և մեր ոգորմած աչքերը դարձնում ենք այդ
ողորմելի և խեղճ աղագորութիւնների վրա, կամե-
նալով նրանց ևս մեզ պէս քաղաքակրթված
և ամեն պակասութիւններից զուրկ տեսնել:
Ուրիշ բան է և կրթող նշանակութիւն ևս
կունենար, եթէ հրէայի փոխանակ ներկա-
յացնէին մի հայ հաստատիր վաճառական
փողեր համբիւր: Մեզ վրա միշտ վատ աղա-
ւորութիւն է գործել երբ տեսել ենք վրաց
բեմի վրա, նրանց համարեալ բոլոր պիէտա-
ների մէջ, որ հայերը ներկայացրած են հարա-

ԻՆՆԵՐՈՐ

ԱՐԱՄԱՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ՓՈՒՐԻՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԼԳ

Դառնանք զէպի մեր պատմութեան սկիզբը.
Այժմ ընթերցողը, կարծեմ, ճանաչում է, թէ ով
էր այն երիտասարդը, որ Բայազէդի բերդի սար-
սափելի պաշարման ժամանակ ընդունեց՝ բերդա-
պահ Դոսիկի ձեռքից նամակը, և իրան խնդր
ձեռքնելով, մտաւ պաշարող բերդերի մէջ, ան-
վտանգ անցաւ թշնամու բանակից, և մի
քանի օրից յետոյ նամակը հասցրեց զինկալ Տէր-
Ղուկասովին: Ընթերցողը նոյնպէս յիշում է, որ
երիտասարդը, չնդունելով զինկալի առաջարկու-
թիւնը՝ մնալ իր մօտ, թիկնապահի պաշտօն վա-
րել, փառքի և ատրճանի տէր լինել. թողեց
ուսուցիչ բանակը և չտապեց մէկի կենցեղ վտան-
գից ազատելու համար:

Այդ երիտասարդը վարդան էր: Տեսնենք, ուր
գնաց նա:
Հեծնելով իր ձին, որ խել էր մի քրդից, օրին
սպանեց ձորի մէջ. վարդանը սկսեց զիմել տեղի
զէպի Արաշկերտի գաւառը: Այնտեղ գտնվում
էին նրա հոգու ամենամօտ ատարկաները. Այն-
տեղ էր ձերտնի խաչօր ընտանիքը, որի մէջ ան-
ցուցիկ էր այնքան շատ լախտաւոր ժամանակներ.
այնտեղ էր զեղեցիկ Լալան, օրին տուն էր իր
ամբողջ սիրտը այնտեղ էին իր սիրելի ընկերները,
որոնց հետ ուխտել էր անձնազոհութիւն մի
սուրբ գործի համար. բոլորը այնտեղ էր, ինչ որ
վարդանի համար պաշտելի էր, ինչ որ նրա հա-
մար նուիրական էր...

Բայց ինչ վիճակի մէջ թողեց վարդանը այդ
բերդին, երբ ինքը չլիթակապ տարվեցաւ թուր-
քաց զինուորական գործակաւորի մօտ: Երեւո-
նի խաչօր իր որդիներէ հետ բանտարկված էին.
նրա ընտանիքը ցրել էր եկած և իւրաքանչիւրը
մի տեղում թաղված էր. Լալայի բախտը կտա-
ված էր երկու օրստիկների թօմաս և քիչնդու և
քուրդ բէկի զազանային մրցութիւնից. պ. Սա-
մանը կախաւորված էր. Մէլիք-Մանսուրը իր
խոնարհ գնաց նրան ազատելու. յաջողեցաւ ար-
դեք, թէ ոչ, այդ մասին ոչինչ չը գիտէր վա-
րդանը:

Բոլորին թողեց նա մի թշուառ, օրհասական
դրութեան մէջ. Այն օրից անցել էր մի և կէս ա-
միս, և նրանց մասին ոչինչ տեղեկութիւն չունէր.
Այդ մի և կէս ամսով մէջ արքան փոփոխութիւն-
ներ եղան, նրան անցքեր անցան. Ռուսները
պատերազմ հրատարակեցին թուրքերի դէմ. Գե-
ներալ Տէր-Ղուկասովի յաղթական զօրքերը տի-
րեցին Բայազէդի և Ալաշկերտի ամբողջ գաւառն
ընդ մօտեցան Երզրուսին: Հնչված հարստահա-
րված հայ ժողովուրդը, անցնելով ուսուցիչ ին-
խանութեան ներքոյ, սկսեց ազատ չունչ քաշել.
Գանկարծ պատերազմի բախտը փոխվեցաւ: Գե-
ներալ Տէր-Ղուկասովը ստիպվեցաւ թողնել իր
տիրած երկրները և վերադառնալ ուսուցիչ սահ-
մանի վրա: Եւ նրա ապրիլի 18-ին տիրած Բայա-
զէդը յունիսի 27-ին կրկին անցաւ թուրքե-
րի ձեռքը:

Վերջին անցքերից վարդանը տեղեկութիւն
չունէր: Նա չը գիտէր, թէ գնեցրաւ Տէր-Ղուկա-
սովի զօրքերի տեղաւորութեան ժամանակ ինչեւ
պատահեցան: Նա չը գիտէր ալաշկերտից թը-
չուառ զաղթականութիւնը և այդ զաղթականու-
թիւնը առաջ բերող տրուր պատճառները:

Անցքերը ամենակարճ ժամանակի մէջ զարմա-
նալի փոփոխութիւն ստացան.
վարդանը, երկու և կէս ամիս առաջ, չղթա-
յակապ, թուրք զինուորներով չըլտապատված, ձե-
րունի խաչօր տնից տարվեցաւ թուրքաց զինու-

րական գործակալի մօտ. Գեռ չը հասցրած, ճա-
նապարհին վրահասան վարդանի երկու ծառա-
ները՝ Սաքօն ու Եղօն, և մի յանդուգն կռիւից
յետոյ կարողացան ազատել իրանց տիրոջ: Նոյն
կռիւի մէջ վերջ ստացաւ վարդանը և համարեա
իր ծառաների ձեռքի վրա տարվեցաւ ուսուցի
Հոյի վրա, Սուրմալու գաւառը հայոց մի գիւղի
մէջ. Հազիւ մի փոքր առողջացել էր նա, որդէս
կամաւոր մտաւ հայոց միջինիայի մէջ. Նոյն ծա-
ռայութիւնը յանձն առեցին և նրա երկու ծա-
ռաները՝ Սաքօն ու Եղօն. Դրանք Բայազէդի պա-
շարման ժամանակ երկուսն էլ սպանվեցան: Բայց
ինչ հնարքով դուրս եկաւ վարդանը բերդից,
այդ մենք գիտենք:

Այժմ տխուր և միայնակ մտաւ նա այն հովի-
տը, ուր գտնվում էր Օ...գիւղը: Ինչ տեսարան էր
ներկայացնում այդ հովիտը մի քանի չաքալ ա-
ռաջ. Բլքան կենդանի և գեղեցիկ էին այնտեղ
դաշտերը, ձորերը և կանաչապատ լեռները: Հով-
տի ամբողջ տարածութիւնը, պատած հասունա-
ցած հունձքի արտերով, ծփում էր, արկնովում
էր ոսկեգին ծովի նման: Լեռների կողմերի վրա,
միջով նման ցրված, արածում էին անասունների
հօտերը: Այնուչ և քաղցր մեղեդիներով լսելի էր
լինում անհոգ հովիտի օրնդի ձայնը. Հարուստ
ընտելներ և ալախատակ մարդը, ձեռք ձեռքի
տուած, արապորում էին երկրի հրաշալիքը: Իսկ
այժմ, այժմ ամեն ինչ փոխվել էր: Այժմ հովիտ
և ամբողջ տարածութիւնը ներկայացնում էր մի
սգաւոր անապատ: Կրակը հրդեհել և լափել էր
հունձքի բոլոր արտերը, ծածկելով դաշտերի ան-
հուն մակերեսովը սև մոխրով: Ո՞վ էր գործել
այդ չարութիւնը. ո՞վ էր ոչնչացրել մշակ մարդու
արդիւնաբերութիւնը, որի վրա թափվել էր այն-
քան շատ քրտինք և ալախատութիւն: վարդանը
զիտարանում էր հասկանալ: Նա աչք էր դարձ-
նում մի ժամանակ գեղեցիկ և մարդաշատ գիւ-
ղերի վրա. դրանք նոյնպէս ներկայացնում էին
մի-մի մոխրի կոյտեր, այստեղ ևս կրակը և հըր-
դեհ թողել էին իրանց կործանիչ հետքերը: Կեն-

քը դադարել էր ամեն տեղ. դաշտերից չէր լա-
վում երկրագործի ուրախ երգը, արօտամարդերի
վրա անասունների չէին արածում, ամեն ինչ լաւ
էր. ամեն ինչ գտնվում էր խուլ մոռուկութեան
մէջ. կարծես ապականութեան կործանիչ զեղ
գեռ. նոր անցել էր այդ թշուառ երկրի վրայով
և ոչնչացրել էր բոլորը, ինչ որ ստեղծել էր մար-
դու աշխատանքը ձեռքը: Ի՞նչ էր պատահել...

Յուլիսի արեգակը օստովի այրում էր: Կէտից
բաւական անցել էր, երբ վարդանը մտաւ Օ...
գիւղը: Նա նմանում էր այն լեզնեղական բնա-
կութիւններին, որ չար կախարդի անեղծով միան-
գամից աւերակ էին դարձել: Տեսնեք, ուր մի ժա-
մանակ կենցեղ էր շնչում, ուր մարդիկ էին ապ-
րում, այժմ դարձել էին նրանց գերեզմանը: Ամեն
ինչ թաղված էր տխուր և այլանդակ փառակե-
րի տակ: վարդանը ուշադրոյալ խելագարի նման
անցնում էր իր ծանօթ փողոցներով: Տեղ-տեղ
նա տեսնում էր մարդկային մարմին մնացորդներ:
Անշուշտ այստեղ կատարվել էր մի սարսափելի
կատաղութիւն, մի աղետալի անցք: Նա անցաւ
եկեղեցու մօտից. Աստուծոյ տունը ոչինչով չէր
օրոշվում իր չուրչը գտնված աւերակներով:

Նա մօտեցաւ ձերտնի խաչօր ամրոցին: Երբ
պարսպի պատերն էին մնացել միայն, այն ևս
տեղ-տեղ քանդված: Ներս մտաւ: Նրա առջև բաց-
վեցաւ մի ցաւալի տեսարան: Տան պարտէզը բոլո-
րովին մերկացել էր ծառերից, այն գեղեցիկ և
ստուգանքալիտ ծառերից, որոնց հովանու տակ ան-
ցուցիկ էր նա այնքան քաղցրիկ ժամեր նաղելի
Լալայի հետ: Այժմ օրոտը էր նա... նրա համար
էր եկած վարդանը... նրան էր օրոտում այդ տը-
խուր աւերակների մէջ... Միթէ յախճապեց, Թա-
րա նրան քուրդ բէկը... Թէ ընկաւ նա տաճիկ
զինուորի ձեռքը... վարդանին տիրեց մի տե-
սակ ստիկոս, մի տեսակ քարացող ստե-
սուռ, երբ յանկաւր բացվեցաւ նրա առջև
սարսափելի իրականութիւնը: Երկաթի մարդը,
կարծես, միանգամից փչրվեցաւ մի դառն և
ամենաճանր հարուածի ներքոյ: Արեւը սաստիկ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՈՒՐԱԵԿԱԸ
ՀԱՅԳԱԿԱՆ ԵՐԳԵՐ
ԴԱՇՆԱԿԻ ՀԱՄԱՐ ԵՐԳԵՐՈՒԹԵԱՄԲ
Ձայնագրութիւն և հրատարակութիւն Յոփ-
հանէս Սուրբադանեանցի: Իւրաքանչիւր օրի-
նակի գինն է մէկ րուբլի: Վաճառվում է
յոգուտ վաճառ ստիպանդներին Թիֆլիսի բո-
լոր երաժշտական մագազիններում: Գումար-
բող առանձիններին գինը և կը լինի: Օտարաքա-
ղաքացիք գինում են հետեւեալ հասցէով.
Въ Тифлисъ. Ивану Артемьевичу Суза-
наджянъ, на Петхайнской улицѣ, собс-
твенный домъ № 13. Յանկաղղորերը ստանալ
միասին և ձիւնաղորի ճաւիղ» երգարանը,
պէտք է ուղարկեն մէկ րուբլի Երեսուն կոպ:

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԹՈՅԼՏՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԼԻՆԻ
ԱԼԼԵԳՐԻ
ՅՕԳՈՒՏ ՍՈՎԱՏԱՆՋՆԵՐԻ
Սանրամանուէթիւններին մասին իր ժամա-
նակին կը յայտնվի: Յանկաղղորերը իրեղէննե-
րը ընծայելու կարող են զիմել հետեւեալ
տիկիւններին:
Տիկին Ն. ՎԵՐԻՄԵՆՆԵՐԻՆ Կոյսիայում
անփական տանը, տիկին Մ. ԴԱՌԵՆԱՆՆԻՆ
Շիօզի տանը Հայոց փողոցում, տիկին Ն.
ՐՕՏԻՆԵՆՆԻՆ Ստարո-Ինտալտուտի փողոց,
Ղայտմանգի տանը, տիկին Ն. ԳԱՐԵՐՈՒՄԻՆ
Իշ. Բէհրեթի տանը, Վանսէնսկի և Դու-
րովի փողոցներին տիկինում, տիկին Մ. ԽՕՍ-
ԲՕՆՎԻՆ, Նալինովի տանը, Սարգիսայա փողո-
ցի վրա, տիկին Մ. ԽՕՏԻՍՈՎԻՆ, Գամբարովի
տանը, Լաբորտորի փողոցի վրա և Նոյնպէս
ԽՕՏԻՍՈՎԻՆ Լամպերի Լանուէթը, Իփրոցովի
փողոցի վրա:
5—5

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(РАСПРОДАЖА)
ՎԵՐՋՆԻ ԵՒ ԱՄԵՆԱԵԺԱՆ ԳՆԵՐՈՎ
ՏՂԱՄԱՐԴԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏ
ՇՈՐԵՐԻ
ԹԻՖԼԻՍՈՒՄ ՄԻՔՕՅԵԼԵԱՆ ԿԱՄԻՏԵՒ ՎՐԱ
ՆԱՄԲԵԱՆԻ ՄԱԳԱՋԻՆՈՒՄ
Տրիկի ամսական պատճ. 10 ր. և աւելի
ժողովուրդի ձեռք շորը . . . 10 ր. —
Վիզիտ . . . 15 ր. —
Սև սերուկի . . . 25 ր. —
Տրիկի գոյնաւոր վարտիք . . 3 ր. —
Սև վարտիք . . . 7 ր. —
Որսի ժակետ . . . 8 ր. —
Առաւօտայն ժակետ . . . 8 ր. —
Նրեկայոց տրիկի գրեւատը 2 մինչև 14
տարեկան . . . 3 ր. —
Բալաիքներ . . . 12 ր. —
Պարուսիի գրեւատներ . . . 5 ր. —
Նոյն սեղ ծախվում են կանանց և տղա-
մարդկանց շապիկներ, կարծեններ, կանանց
կոշիկներ, նոյնպէս գրեւատներ, կտաւի ման-
ժեւանք, Թեկիներ, Թաշկինակներ, ձեռնոց-
ներ, պէնիւարներ և ժիւղոններ:
7—10

ԲԺՅԱՆՈՅ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՈՍ-
ԻՕՏԱՆ 9-13 ՄԻՆՁԵՒ 1 ԺԱՄԱՆ:
Երկուշաբթի. Գաղթի օրի կանանց
հիւանդ. Գորակի վիշ ներքին հ., Բօտի-
նեանց կանանց և երեխաների հ., Բիււ-
րեանց խրուրդական և աշքերի հ.,
Շտեմբօրսի վիշերական և կաշու հ.,
Բաբայեան ջղային և հոգեկան հ.:
Երեքշաբթի. Միւսկի վիշ խրուր-
դական հ., Վզօրով վիշերական և բողա-
զի հ., Բէյլի կաշի հ., Բախուտով
մանկաբարձական, կանանց և երեխաների հ.,
Կրասնօգլեւադով, Լիսիցեի վիշ և
միշի վիշերին հ.:
Չորեքշաբթի. Լիսիցեի վիշ և Բուդ-
ովովի ներքին հ., Շտեմբօրսի
վիշերական և կաշու հ., Աստուածատու-
րով կանանց հիւանդութիւններին:
Հինգշաբթի. Վզօրով վիշերական և
բողազի հ., Բօտինեանց կանանց և երե-
խաների հ., Լիսիցեի վիշ և Բիւրմիշի
ներքին հ., Բիււրեանց սիֆիլիսի և
սեռական օրգաններին հ.:
Ուրբաթ. Գաղթի օրի կանանց հ.,

Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի
հրատարակութեան վարչութիւնը պատիւ
ունի յայտնել որ այդէն դուրս եկաւ մա-
նուկի տակից և ծախվում է Թիֆլիսի բոլոր
գրախանաներին մօտ ընկերութեան տպագ-
րութիւնը:
ԲԻՉԵՐՍՕՈՒ. ԹՈՎԱՄԱՍ ԵՂՐՈՐ ՏՆԱԿԸ,
փոք. երեխաների համար Պայմեր, Թարգ. օր-
ն. Տէր-Սարկոսեանի: Պատկերազարդ. և
կազմած—60 կ.:
Օտարաքաղաքացիք կարող են զիմել հետե-
ւեալ հասցէով. Въ Тифлисъ, Тифлисское
Общество изданія армянскихъ книгъ.
Այս օրերս դուրս կը գոյ նոյն ընկերու-
թեան հրատարակութիւնը. ՄՈՐԵՒ ՆԻ ՆՈ-
ՐԱՆ ՋԵՋԵԼՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ. աշխ. Տէր-Բարսե-
ղեանցի:

ԵԳՐՈՒ ԿԱՄՈՒՄՈՎԻ ԵՒ ԸՆԿ.
ԱՌՆԵՏԱԿԱՆ ՏԱՆ
ԳԼԻԱՌՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ
Յայտնում է հատարակութեանը, որ ցան-
կացողները կարող են առնել 1 և 2 ներքին
5% փոխառութեան տոմսակները յետաձգու-
թեամբ վճարելով մի տարվայ ընթացքում
և աւելի երկար ժամանակամիջոցում, նոր և
շատ շահաւէտ պայմաններով, որոնց մասին
տեղեկանալ կարելի է նոյն իսկ կանտորայի մէջ,
որ նոյնպէս առնում է այդ տեսակ տոմսակ-
ներ: Գրանցեալը գտնվում է Ալեքսանդրեան
այլու. հանդէպ, Թումանովի տանը:
6—10

ОСОБА, знающая РУССКІИ, ФРАН-
ЦУЗСКІИ, НѢМЕЦКІИ языки и начало
МУЗЫКИ желаетъ получать мѣсто ГУ-
ВЕРНАНТКИ. Объ адресѣ узнать на
ПОЧТОВОЙ СТАНЦІИ въ ДАМСКОЙ
комнатѣ.
ՄԻ ՏԻՎԻՆ, որ զիտէ ռուսերէն, ֆրան-
սերէն, գերմաներէն և եթովպերէն և երաժշ-
տութեան սկիզբները, ցանկանում է ՏՆԱՅԻՆ
ՎԱՐՃՈՒՆՈՒ տեղ ստանալ: Հասցէն իմանալ
ՓՕՏԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ, ԿԱՆԱՆՑ սենեա-
կում:
3—3

Երկու ֆրանսիացի ՕՐԻՈՐԻՆԵՐ ցանկանում
են ընդունել իրանց մօտ երեխաներին դասեր
տալու համար, առաւօտեան ժամի 9-ից
մինչև ժամի 1-ը: ԳԱՍԵՐԸ կը լինեն ֆրան-
սերէն, գերմաներէն լեզուներէց և մուզիկա-
լից:
Հասցէն Սոլոյակի, տուն Օրբելի: № 14.
3—3 (1)

Միւսկի վիշ խրուրդական հ., Կրասնօ-
գլեւադով և Լիսիցեի ներքին հ., Բա-
խուտով մանկաբարձական, կանանց և ե-
րեխաների հ., Շտեմբօրսի և Աստ-
վածատուրով վիշերական և կաշու հ.,
Բաբայեան ջղային և ներքին հ.:
Երաբթի Լիսիցեի վիշ և Վիւրմիշի
ներքին հ., Բաբօվ կուրճերի հ., Եանկօ-
վովի վիշերական և կաշու հ.:
Բացի այդ բոլորի վզօրով բժշկանոցի
մէջ բնութեամբ է անվարձ աղքատ հիւանդ-
ներին ամենայն օր երկուցեան 4—6 ժամը:
Բժիշկ Բաբայեան չորեքշաբթի օրերը ա-
ռաւօտեան 9-ից մինչև 11 ժամը բնու-
նում է իր տանը բժշկանոցի հիւանդներին
էլեկտրական բժշկութեան և ներքին հ.
համար: Բնակարանը գտնվում է Սերգիւս-
կայ փողոցի վրա, Բայանդուրովի տանը:
Առաւմարտ Թրքիստ աղքատ հիւան-
դներին բժշկանոցի տոմսակով բնութեամբ է
ամենայն օր, ամենայն ժամանակ:
Բացի կիրակի օրից ամենայն օր առա-
ւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է
մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու
համար:
Բժշկանոցի գիրկատը Լիւիցեի:

ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ Իշխանութեան Թղթաւութեամբ ԱՂԻ-
ՍԵՆԴԵՐԵՆ ԵՅՐԻՈՒՄ Ընկու է ՎԻՃԱԿԱՆՈՒՆԱՂ-ԱՂԻՅԻ
ՅՕԳՈՒՏ ՍՈՎԱՏԱՆՋՆԵՐԻ:

Տոմսակների խաղարկութիւնը կը շարունակվի առաւօտեան 10 ժամից մինչև երեկոյ
8 ժամը:
ԵՅՐԻՆ ՄՏՆԵԼՈՒ տոմսակը 20 կ. արժէ և **ԻՐԵՒՈՒՆԻՔ** է
իս վիճակաւորի մի տոմսակ **ՉՐԵՐԵՐ** ստանալ:
Վիճակաւորի տոմսակը 20 կ. արժէ:
Այդի մէջ կածի զինուորական **ԵՐԵՒԻՇՏՆԵՐԻ** խումբը:
ՏՆՆՈՂ տոմսակները Թուղ 700 հարիւր են, իսկ տարված առարկաները Ու-
ԱՐԵԱՐԵՆՑ, ԱՊԱԿԵԱՅ, և զանազան ՊԱՏԿԵՐՆԵՐ են:
Եթէ ԵՂԱՆԱԿԸ ՎԱՏ ԼԻՆԻ վիճակաւոր-ալգորի կը ՅԵՏԱՉԳՎԻ մինչև հետեւեալ
ԲԱԿԻ:
1—4

1880

ԹԻՖԼԻՍ

ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ ՀԱՅ ԹԱՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ կը ներկայացնէ
ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆՈՒՄ
ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ
I
ՀԱՅՏԱՐԱՐ ԴԱՏԱՌՈՒ ՄՕՏ
Կոմեդիա 3 արար, ՓՈՒԱԴՐՈՒԹԻՒՆ 3. Տէր-Գրիգորեանի
Անցքը պատահում է ԹԻՖԼԻՍՈՒՄ
II
ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ
Տ Օ Տ Օ
Վարդիլ 1 արար, Թարգմ. 8. Տէր-Գրիգորեանի. երկրորդ և երրորդ արար. ԱՆՏՐԱԿ
մէջ տ. Փաշայեան-Տէր-Գրիգորեան **ԿԵՐԳԷ:** Տեղերը գինը սովորական է: Սկիզբն է 8
մին:
Տոմսակները Թէ ԿԵՐԳԱՅԵՐՄԵՆ օրը և Թէ ՎԵՂՈՐՕՔ կարելի է ստանալ
ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԵՏՐՈՆԻ կասալում, առաւօտեան 10—2 և երեկոյան 6—8 ժա-
նում:
2—4

ՆՈՒՒ-ԷՕՈՒՔԻ ԶԻՆԳԵՐ

Լմենամեծ կարելու մեքենայի ընկերութեան աշխատակիցն հա-
բաւն բաւական ըլլալով յանձնել իրեն ձեռագործութիւններն կա-
մուածքին պարզութեամբ, հաստատութեամբ և այլա՛յերպ աշխ-
տութիւններն կատարելով, տնական և արուեստաւորներու պիտոյ
համար, կը համառօտէ զմեզ համբերու մէկիկ մէկիկ իրենց գեթ
զանցութիւնն ուրիշ հնարուած նման առարկայից վրա:
Վերջիւնեալ Նիւ Լոնքի Օքսկեր ընկերութիւնը այս ապր-
սկզբներն բացաւ ուրիշ գիւնաւոր քաղաքներու պէս, հոս ևս թիֆ-
լիսեան մը այլ և այլ կարելու մեքենաներով, Լտամանակի փողո-
ցու պարսկին տունն, Երեւանի հրապարակի մօտ անմիջապէս և
խնդրուի խաթունայց և պարոնայց ուզող ստանալ այսպիսի մեքե-
նիկ նորեալ շտեմարանն ուրիշ վաճառականներու հետ, որոնք մի-
Օքսկերի սուտ անուամբ նշանակներով և պատկերներով կը խա-
մեր պաշտպանաւորներն և դժբաղդաբար իրենց մեքենաներով
տարակուսացունեն սեպհական մերոնց լաւութեան անունն:
Ուրիշ քաղաքներու բնակիչք ալ կրնան զիմել մեզ նամակով
մեր ընթացիկ գիւնեւորն ցուցակն ուզելու համար, որ կը խրկեմք
և Թէ որ և է տեղեկութիւն հարցունելու համար, որոնց կը պ-
տասխանեմք նմանապէս մի և նոյն լեզուով և կարելի արագութեա-
մեր երեսագիրն է:

Դ. Նեյդլինգեր. Թիֆլիս.
Գ. Նայտլինկեր
Գլխաւոր հոգաբարձու ամբողջ Ռուսաստանի և միջին Եւրոպայի
Խանութի մէջ կարելի է ուղղել խանդարված մեքենաները:
3—3 (2)